# Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

## «ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՐԿԱԴԻՐ ՎՏԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՆՁԱՆՑ ՎԵՐԱԴԱՐՁԻ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐԻ ՓԱՍՏԱԹՂԹԱՎՈՐՄԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՎԱՎԵՐԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

2023թ. հունիսի 8-ին ՌԴ Սոչի քաղաքում ստորագրվել է «Անկախ պետությունների Համագործակցության մասնակից պետությունների՝ հարկադիր վտարման ենթակա անձանց՝ վերադարձի վկայականներով փաստաթղթավորման հարցերով փոխգործակցության մասին» Համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) (Հայաստանի Հանրապետության կողմից վերապահումով):

Համաձայնագիրը նպատակաուղղված է՝

- ստեղծելու անձը հաստատող և պետական սահմանը հատելու համար անհրաժեշտ վավերական փաստաթղթեր չունեցող հարկադիր վտարման ենթակա անձանց՝ վերադարձի վկայականներով փաստաթղթավորման հարցերի շրջանակներում փոխգործակցության արդյունավետ մեխանիզմներ,
- դյուրացնելու ծագման պետության ներկայացուցչություն հարցումներ ուղարկելու հարցերի շուրջ փոխգործակցության կարգը:

Համաձայնագրով նախատեսվող գործընթացը համահունչ է Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կողմից իրականացվող անձանց նույնականացման և քաղաքացիության պարզման ուղղությամբ իրականացվող գործառույթներին:

Այս համատեքստում Համաձայնագրի վավերացումը հնարավորություն կտա՝

1. համատեղ և համակարգված քայլեր իրականացնել ԱՊՀ մասնակից պետությունների տարածքներում անկանոն կարգավիճակում գտնվող անձանց նույնականացնելու և քաղաքացիությունը պարզելու ուղղությամբ,
2. փոխգործակցություն հաստատել Կողմերի միջև հարկադիր վերադարձի ենթակա անձանց վերադարձի վկայականների ձևակերպման հարցերում,
3. զարգացնել արդյունավետ համագործակցություն միգրացիայի ոլորտում:

Համաձայնագիրը՝

- չի նվազեցնում սույն համաձայնագրի մասնակից պետությունների՝ միջազգային իրավունքով, այդ թվում՝ 1948 թվականի դեկտեմբերի 10-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրով, 1984 թվականի դեկտեմբերի 10-ի

Խոշտանգումների եւ այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ կոնվենցիայով, 1951 թվականի հուլիսի 28-ի Փախստականների կարգավիճակի մասին կոնվենցիայով, 1967 թվականի հունվարի 31-ի Փախստականների կարգավիճակի մասին արձանագրությամբ ամրագրված իրավունքները, պարտավորությունները եւ պատասխանատվությունը,

- չի առնչվում անձանց՝ քրեական գործերով հետընդունման եւ հանձնման ոլորտում Կողմերի համագործակցության հարցերին:

Ելնելով վերոնշյալից և «Միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի հիմքով՝ ՀՀ ներքին գործերի նախարարությունը նպատակահարմար է գտնում «Անկախ պետությունների Համագործակցության մասնակից պետությունների՝ հարկադիր վտարման ենթակա անձանց՝ վերադարձի վկայականներով փաստաթղթավորման հարցերով փոխգործակցության մասին» միջազգային համաձայնագրի վավերացումը:

**ՀՀ ՆԳՆ Գլխավոր քարտուղար** **Արա Ֆիդանյան**